ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Աշոտ Մուրադյան

Միեր Մարտիրոսյան

Օհաննա Գառգալոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2022թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը

4. Հրավիրող կողմը՝

ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիա (այսուհետ՝ Միավորված կոլեգիա)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Միավորված կոլեգիան ոլորտային համագործակցության մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների փոխգործակցության իրականացումն ապահովելու նպատակով:

Միավորված կոլեգիան հիմնադրվել է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 22.06.2011թ. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային

ծառայությունների միավորված կոլեգիայի մասին» պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր): 2015 թվականին Պայմանագրին միացել են Հայաստանի Հանրապետությունը և Ղրղզստանի Հանրապետությունը:

Ներկայումս Միավորված կոլեգիայի կազմում ներկայացված է 5 պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը:

Միավորված կոլեգիան կարևոր նշանակություն ունի թե՛ ոլորտում տեղի ունեցող միջազգային զարգացումներին ու համադրելի առաջավոր փորձին ծանոթանալու և կիրառելու, թե՛ մաքսային ոլորտում ՀՀ մաքսային ծառայության իրավակիրառ փորձը ներկայացնելու ու Հայաստանի ճանաչելիությունն ապահովելու համար:

2022 թվականի մայիսին Ռուսաստանի Դաշնությունում (ք. Մոսկվա) առկա ձևաչափով կայացած Միավորված կոլեգիայի 38-րդ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության և ստորագրված որոշման համաձայն Միավորված կոլեգիայի 39-րդ նիստը նախատեսված էր անցկացնել Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում: Ի կատարումն վերոհիշյալ որոշման ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.08.2022թ. համապատասխան հրավեր էր ուղարկվել Միավորված կոլեգիայի քարտուղարություն: Սակայն ներկայիս իրավիճակով պայմանավորված ս.թ. սեպտեմբերի 14-ին որոշում կայացվեց տեղեկացնել Միավորված կոլեգիայի քարտուղարությանը նիստի՝ Հայաստանի Հանրապետությունում անցկացման անհնարինության մասին: Ռուսական կողմը 2022 թվականի սեպտեմբերի 16-ին գրությամբ հայտնեց իր պատրաստակամությունը Միավորված կոլեգիայի 39-րդ նիստը Մոսկվայում անցկացնելու առնչությամբ:

Միավորված կոլեգիայի 39-րդ նիստը անց է կացվել երկօրյա ձևաչափով: Ս.թ. սեպտեմբերի 29-ին տեղի է ունեցել Միավորված կոլեգիայի փորձագիտական նիստը, որի ընթացքում վերջնական քննարկվել և համաձայնեցվել են օրակարգում ներառված և նախապես մշակված հարցերը, իսկ սեպտեմբերի 30-ին անց է կացվել Միավորված կոլեգիայի անդամների բարձր մակարդակի նիստը, որի ընթացքում մաքսային

ծառայությունների ղեկավարների կողմից քննարկվել են վիճահարույց խնդիրները և ստորագրվել են նիստի օրակարգում ներառված որոշումները:

Ս.թ. սեպտեմբերի 30-ին կայացած՝ Միավորված կոլեգիայի նիստին մասնակցել են ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարները, պատվիրակությունները, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ, մաքսային համագործակցության հարցերով նախարարը և այլ պաշտոնատար անձինք:

6. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել և ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 19 որոշումներ, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին, այդ թվում՝ Միավորված կոլեգիայի 38-րդ նիստի ընթացքում ստորագրված որոշումների իրականացման ընթացքին, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային կից ոչ ինտրուզիվ զննման սարքավորումների հարցերով աշխատանքային խմբի ստեղծմանը, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների դասակարգմանը, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով նախատեսված լիազորված տնտեսական օպերատորների կողմից հատուկ պարզեցման կիրառման պրակտիկային, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծված և ազատ շրջանառության մեջ դրված տրանսպորտային միջոցների էլեկտրոնային տեղեկատվության տրամադրմանը, մաքսային տարանցում մաքսային ընթացակարգի դադարեցման ժամանակ էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակմանը, էլեկտրոնային եղանակով հայտարարագրված և մաքսային տարանցում մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողնման ժամանակ տրանսպորտային, առևտրային և այլ փաստաթղթերում մաքսային մարմինների կողմից նշումներ չկատարելու դեպքերին առնչվող մի շարք հարցեր:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումներ են տեղի ունեցել ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնատար անձանց հետ, մասնավորապես Բելառուսի մաքսային ծառայության ղեկավարի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ս.թ. հոկտեմբերի 6-ից 7-ը ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի՝ Բելառուսի Հանրապետություն նախատեսվող այցի օրակարգում ներառված մաքսային համագործակցության երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 19 որոշումներ, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին:

Միավորված կոլեգիայի 30.09.2022թ. թիվ 39/19 որոշմամբ ձեռք է բերվել համաձայնություն Միավորված կոլեգիայի 40-րդ նիստն անցկացնել 2022 թվականի 4-րդ եռամսյակում, Ղազախստանի Հանրապետությունում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ստորագրված որոշումները շրջանառվելու են ՀՀ ՊԵԿ համապատասխան պատասխանատու ստորաբաժանումներում, և վերջիններիս իրավասություններին առնչվող տեղեկատվությունը որոշումներում նախատեսված ժամկետներում տրամադրվելու է Միավորված կոլեգիայի շրջանակներում պատասխանատու գերատեսչությանը:

10" Ստորագրությունը, ամսաթիվը՝

04.10.2022թ.